ՀՀ Տավուշի մարզի Չորաթանի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահի /ծածկագիր՝ 3.1-1/ և 2-րդ կարգի մասնագետի/ծածկագիր՝ 3.3-1/ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

06.03.2015

Հայտատու՝ ՀՀ Տավուշի մարզի Չորաթանի գյուղապետարան
«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված

Առաջատար մասնագետ-հաշվապահը
ա/ունի առնվազն միջնակարգ կրթություն
բ/ ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի <<ՀՀ Սահմանադրության >>,
< Համայնքային ծառայության մասին >,<Տեղական ինքնակառավարման մասին>
<Տեղական տուրքի և վճարների մասին>,< ՀՀ բյուջետային համակարգի մասին>
,<Գանձապետական համակարգի մասին>,< Գնումների մասին>, < Հաշվապահական հաշվառման մասին> ՀՀ օրենքների, Հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, իրականացնում է հաշվապահական հաշվառումը , վճարման փաստաթղթերի և բյուջեի նախագծի և դրանցում կատարվող փոփոխությունների կազմումը, հաշվետվությունների ստուգումը, ամփոփումը և ներկայացումը, ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
2-րդ կարգի մասնգաետը
ա/ունի առնվազն միջնակարգ կրթություն
բ/ ունի իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի <<ՀՀ Սահմանադրության>>,<<Համայնքային ծառայության մասին>>, << Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> , << Քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները քննարկելու կարգի մասին>>,<<Արխիվային գործի մասին>>, ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն իրականացնում է գործավարությունը,փաստաթղթային սպասարկումը, ապահովում է փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները , ինչպես նաև սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Դիմող քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
ա/ գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով),
բ/ համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային

ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի(երի), վկայականի(երի), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,
գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
դ/ հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
ե/Համայնքային ծառայության մասին ՀՀ օրենքի 12 հոդվածի «ե» կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,
զ/ մեկ լուսանկար՝ 3X4 չափսի,
է/ անձնագրի պատճենը:
Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:
Մրցույթը կկայանա 2015թ. ապրիլի 6-ին ժամը 12.00-ին՝ Տավուշի մարզի Չորաթանի գյուղապետարանում 1փողոց 19շենք:
Դիմումների ընդունման վերջնական ժամկետը 20.03.2015թ.:

Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, Չորաթանի գյուղապետարան, 1փողոց 19շենք

Հեռ..՝ +374 267-6-15-02, +374 93 46 94 74